# ՀԱԶԱՐ ՆԱԶՈՎ, ՅԱՐ...
## (ՍԱՐԻ ՍԻՐՈՒՆ ՅԱՐ)






Հազար նազով, յա՛ր, հովերի հետ եկ,
Ծաղիկ փնջելով՝ սարվորի հետ եկ,
Սև ձիուս վրա ձեր գյուղն եմ եկել,
Դուռդ փակ տեսել՝ մոլոր մնացել:

*Կրկներգ.*
*Սարի սիրուն յար, սարի մեխակ բեր,*
*Ախ չէ, ինչ մեխակ, սիրո կրակ բեր:*

Հազար մի ծաղկի մեջ ես մեծացել,
Ծաղկանց ցողերով մազերդ թացել,
Մազերիդ բույրը հեռվից է գալիս,
Զեփյուռը բերում, սրտիս է տալիս:

Երբ քո հայացքը երկնին ես հառում,
Վառ աստղերն, ասես, նոր լույս են առնում,
Քո ձայնն են առնում հավք ու հովերը,
Ախ, ե՞րբ կառնեմ ես քո մատաղ սերը:

Սարից է գալիս էս առվի ջուրը,
Բերում է, յա՛ր, քո բույրն ու համբույրը,
Աշո՛տ, թե կարաս քո երգ ու հանգով
Յարիդ կախարդիր, թող տուն գա հանդով: